ԳՐԻԳՈՐ ԱԻ. ՔԱՀ. ՄԱՆԳԱԿՈՒՆՈՒ

1223

ՋՋՈՒԱՆՔՆԵՐ

5

Տպարան «ԱՌԻԼՅԱՆԻ» Բարձրագիտ № 14.
1911

6 NOV 2011

891.99
Մ-215
ար.

ԳՐԻԳՈՐ ԵՒ. ՔԱՀ. ՄԱՆԴԻՍԿՈՒՆԻ

ՁՁՈՒԱՆՔՆԵՐ

1001
76476

ԶԱՆԱԶԱՆ ԺԱՄԵՐԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Բարոնսկայեա № 14.
1911

24 JUN 2013

41828

1. Աշխարհ ով աշխարհ, ցաւով լի աշխարհ
Զզուեցայ քեզնից.
Քո մէջ կատարուող, հազար ու մէկ կերպ
Կեղտոտ գործքերից.
Լաւի աչքերից, զուր ի զուր տեղը
Թափուող հեղեղից,
Վատի աչքերի բիւր բարիքների
Խինդ ու ծիծաղից.
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

2. Լոյսը ատողից, խաւար սիրողից
Լաւից փախչողից,
Վատը գովողից, էշը ձիու հետ
Հաւասարողից.
Զարն ու բարին, սուտն ու ուղիղը
Սևն ու սիպտակը,
Ճիշտ չը որոշող, այլև որոշել
Զուզող մարդկանցից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

3. Արժանաւորի, լուն փիղ շինողից
Հրէշ ասողից.
Սատանի ընկեր, հացակատակին
Հրեշտակ կնքողից,
Լաւերի դէմքին մեծերի առաջ
Սև մուր քսողից,
Վատերի արած ադտոտ գործքերին
Սիպտակ սփռողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

4. Խոհեմ անձերին հեռացնողից,
Քսուն յարգողից,
Ողջամիտներին հալածողներից
Մոլին սիրողից,
Ցած ու ընկածին զգիր խոզերին
Յառաջ տանողից.
Պատիժ պատուհաս, ցաւ հասարակաց
Անող գայլերից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

5. Թքամանները թանաքամաններ
Դարձնողներից,
Ցանկերը քանդող, սահման չիմացող
Խառնակիչներից
Խոզարածներին էշարածներին
Մարդիկ կարծողից,
Յարգին անյարգին, ժրին ու ծոյլին
Մէկ կերպ նայողից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

6. Բօշայի ցեղից յառաջ եկողից
Փաշայ եղողից,
Իշխան ցեղերին, մուրացկաններից
Բէգեր կարգողից,
Աղքատ վիճակից, բաղդի բերմունքից
Հարստացողից,
Լիրբ գերիներից գող ծառաներից
Տէրեր դարձողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

7. Մեծագործ անձի գործող ձեռքերը
Անգործ թողնողից,
Կոյր, կաղ, չոլաղին, սրբազան գործքի
Ղէկը տուողից,
Հսկող քաջ հովուին, գայլեր վանողին
Մթնում պահողից.
Առիւծին՝ էշի, էշին Առիւծի
Պաշտոն տուողից.
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

8. Քիչ պահանջներին բաւարարութիւն
Չըտուող մեծից,
Մեծ պահանջների դռներ բանալու
Պատճառ եղողից,
Փոքր ցաւերի առաջն առնելու
Լուրջ ջանք չանողից,
Վարակիչ ցաւով ամբողջ քաղաքը
Սևեր սպառողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

9. Ուսուցիչների սրտերը վառող
Հոգեբարձներից,
Խեղճ տէրտէրներին անդանակ մորթող
Երեսփոխներից,
Տիրացուների հոգիքը հանող
Անխիղճ հայրերից.
Ժամակոչներին անպատան թաղող
Տէր Թորոսներից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ

10. Տգէտ իմաստակ թերուս ուսուցչից
Անարժան հայրից,
Իրանց պաշտօնի յարգն ու պարտքը
Չրճանաչողից,
Դորանց կոչողից, գառների համար
Ժանտախտ անողից
Օրէցօր դարձեալ իրանց սխալը
Դեռ չուղղողներից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

11. Օրէնք ու կանոն ոտքի տակ տուող
Ցաւագար գլխից,
Նոր օրինադիր իրան կարծողից
Հոգւով հիւանդից,
Չափը չրգիտցող, չափից շատ աւել
Դուրս եկող մարդից,
Անզօր շնիկին մեծ-մեծ հաչողին
Առիւծ ասողից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

12. Կացնին կոթ դարձող, մայրի ծառերին
Գետին փռողից,
Տներ քանդելով՝ բուերի համար
Բոյներ շինողից,
Խելքը և ոյժը՝ դիմացինի հետ
Դեռ չրչափողից,
Անյաղթ առիւծի ձեռքիցը բաժին
Խլել ուզողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ

13. Ամեն ծափ տալու, առաջ ընկնողից,
Պար եկող մարդից,
Տերևի շարժման խէնթ խելառի պէս
Ռումբեր ձգողից,
Իրանից ցածրից հեռը ընկնողից
Վրէժ խնդրողից,
Անմեղ գառները՝ գայլերի ձեռքը
Տուող հովիւից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ

14. Ունք շինելու տեղ՝ աչքը հանողից
Իմաստակ լրբից,
Մէկը շահելուն՝ հարիւր հազարին
Զրկող բաժինից,
Իրանց իսկ օգտին, ազգ, հաւատ կրօն
Վաճառողներից,
Յայտնի ազգասէր, գաղտնի ազգացեց
Անպիտաններից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

15. Իրան իմաստուն, հանճարեղ կարծող
Վեր վայր վազողից,
Խելքին զօր տուող, ազգի իրաւունք
Պաշտպանող խէնթից,
Պինդ-պինդ փչելով, օդի մէջ ամրոց
Կառուցանողից.
Դարտակ խօսքերով ազգասէր անուն
Կրող հրէշից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

16. Սովի առաջը հիմնական պարիսպ
Զրքաշողներից,
Աղքատ գիւղացուն հաստատուն կերպով
Ձեռք չրմեկնողից,
Ազգ, եկեղեցի, դպրոց, լրագիր
Մոռացողներից,
Սորանց իսկ օգտին կտակ չանողից
Հարուստ մարդկանցից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

17. Քահանայական վեհ դասակարգը
Ձաղատողներից,
Մուրացկանութեան, աւազակութեան
Օրէնքի ձեռքից,
Ձափ ու սահմանով պարզ ոռճիկ տալու
Կարգ չրգնողից,
Մեծ գործ կատարող մարդու արժանիք
Զունեցող մեծից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

18. Ժողովուրդների աչք, հոգի, բերան
Համարուող գլխից,
Հայրենի այգուն մեծ-մեծ հոգսերով
Ցանկ չրպատողից,
Վայրենի խոզեր այգին մտնելու
Դռներ բացողից,
Կարճատեսներից, եսամօլներից
ՌոբովաՀներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ

19. Օտարի տունը, օտարի բոյնը
Սիրող մարդկանցից,
Օտարի լեզուն, օտարի բառեր
Վեր դասողներից,
Օտար աշխարհում սէր կապողներից,
Տուն տեղ դնողից.
Մեր մայր Հայաստան դատարկ թողնողից
Անմիտ հայերից,
Հաւատացէք զզուեցայ •
Աստուած վկայ զզուեցայ։

20. Իրան շատ մօտիկ ազգականներին
Հեռացնողից,
Սատանաներին թարս նայողներին
Մօտեցնողից,
Նորանց իւր ձեռքի մեծ-մեծ գործքերը
Հաւատացողից,
Այսպէս իւր գլուխ գայլերի ձեռքում
Գերի անողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

21. Աչքի առաջի զօրաւոր սրբին
Խունկ չրծխողից.
Հեռաւոր սրբին մեծ-մեծ յոյսերով
Զոհեր անողից,
Նեկտարով լիքը, գինու կարասը
Մէկ կողմ թողնողից,
Դատարկ կարասի ձայնից խաբուողից
Նորան վազողից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

22. Նեղն ընկած օրում մեծ-մեծ խոստումներ
Անող մարդկանցից,
Լայն ընկած օրում, իրանց խոստումը
Շուտ դժրողներից,
Աշխատաւորի աշխատանքները
Ջուր կտրողներից,
Մարդուս հաւատքը հմքից շարժողից
Անամօթներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

23. Հայ գրի, խօսքի, նոյն իսկ հայ անուան
Պաշտպան վանքերից,
Նորանց իսկ օգտին կեանքերն անգամ
Խնայողներից,
Աւեր վանքերը չընորոգողից
Ջրշէնցնողից,
Նորանց գոյքերը ծախող լափողից
Աւեր անողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

24. Քաղցր խօսքերով անոյշ նեկտարը
Առաջարկողից,
Նեկտարից յետոյ մահաբեր թոյնը
Խմեցնողից,
Բարեկամ մարդուն՝ ուշ ձեռք բերողից
Շուտ կորցնողից,
Ճանաչողութիւն չունեցողներից
Կասկածոտներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

25. Կերպ կերպ հնարքով առաջ ընկնողից
Ձայներ շահողից,
Սև օրերիս մէջ վագր դարձողից
Թումբեր քանդողից,
Ազգի վեհ Պետի լեզուն կապողից
Ոյժից ձգողից,
Գայլերի առաջ քաջ հովուի ձեռքը
Թուլացնողից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

26. Քաղաքականը, անձնականներով
Կորցնողներից,
Հոգևորների եղածն էլ ձեռքից
Խլել ուզողից,
Խլողից խլուվել, խպառ կողոպտուվել
Զրմտածողից.
Ազգին անգլուխ մեռցրած մարմին
Թողնել ուզողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

27. Ուսմունքի գլխից, պսակ կրօնը
Վերցնողներից,
Առաքինութեանց հաստատուն սիւնը
Կործանողներից,
Ժամի դռները ժամասէրներից
Անպէտք անողից,
Մարմին անհոգի ճառախօսներից
Շուտ խաբուողներից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

28. Զէնք չըսիրողից, զէնք չունեցողից
Անզինավարժից,
Ռուս դրօշակին զինուոր գրուելու
Փախչող թոյլերից,
Ազգի վեհ անուան, փառքի տեղ ամօթ
Բերող թոյլերից,
Քաջի պէս զինուած, առաջ չընկնողից
Զարդեր չանողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ

29. Փախուկ մարդկանցից վոհմակ կազմողից
Խորամանկներից,
Առիւծին. վագրին կապկի պէս պարել
Փորձ անողներից,
Անկիրթ անկարգից բարեկարգութիւն
Յուսացողներից,
Սատանաներից առաքինութիւն
Սպասողներից.
Հաւատացէք զզուեցայ
Ասուած վկայ զզուեցայ։

30. Շորերը փոխող. աշխարհականի
Շորեր հագնողից,
Լրբերես դէմքով փողոցներումը
Խօսող շրջողից,
Արտասահմանից ուսմանց հետ խենէշ
Ձևեր բերողից,
Հային իսկ յատուկ, սուրբ պատկառանքը
Կորցնող հայրից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

31. Ոսկի գիզողից հարուստ ու փարթամ
Անուն ունողից,
Ազգի հոգսերին կոպէկն անգամ
Խնայողներից,
Իրանց մոլութեան հարիւր հազարներ
Զոհող խոզերից,
Աղքատի ձեռքից հացը խլողից,
Անկուշտ հարուստից,
Հաւատացէք զզուեցայ,
Ասուած վկայ զզուեցայ։

32. Լկտի աղջկանից հրապուրուողից,
Բիւրեր զոհողից,
Համեստ գործողին խեռ խոժոռ դէմքով
«Հեռու» ասողից,
Տներ քանդողին՝ շինողից աւել
Պատիւ տուողից,
Սիրտ կոտրող վատին, սիրտ շահող լաւից
Սիրող յարգողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

33. Սոված օրերում, հացը տուողին
Հացից զրկողից.
Նեղն ընկած ժամում՝ կեանքը տուողին
Կեանքից զրկողից,
Կարիք օրերում պատուով պահողին
Պատուից զրկողից,
Զրկող զոշերին, *) զուլում զրկանքով
Զըզրկողներից,
Հաւատացէք զզուեցայ
Ասուած վկայ զզուեցայ։

*) Զոշ—լկտի, անամօթ, պիղծ։

34. Տէրտէր խաբողին, տէրտէրի հացը
Խլող գաղանից,
Հաւատ փոխողից, հաւատի յարգը
Չիմացողներից,
Աստուած ու հոգին մոռացողներից
Ժամից ծոյլերից,
Անցաւոր կեանքը ամեն բաներից
Վեր դասողներից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

35. Հեռու աշխարհներ իրար հետ կապող
Մօտեցնողից,
Երկինքը մոքից հեռուն շատ հեռուն
Հեռացնողից,
Ծով ու ցամաքը, և շատ դժուարներ
Խորը քննողից,
Միայն միւս կեանքին ուշադրութիւն
Չդարձնողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

36. Քահանաների ծուլից տգէտից,
Գինէմոլներից,
Գրքեր ատողից, նարտի սիրողից
Փողոց չափողից,
Իրանց անվայել ստոր միջոցաւ
Խոնարհուողներից,
Շողոքորթ լեզուով իրարից ծխեր
Որսացողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

37. Այլոց սրբութիւն, վարքի ուղղութիւն
Գոռող գոչողից,
Գաղտ հաւերի բոյն՝ յետքից ծակողից
Ամբողջ սրբողից,
Օրինազանցին պատիժ պատուհաս
Որոտացողից,
Օրէնքը՝ հրմքից քանդող կործանող
Գառնամորթ գայլից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

38. Ա՜խ, ի՞նչ ասեմ ես, հօտը զրկողին
Դալար խոտերից,
Եղների ուսին անտաշ գերանից։
Խիստ լուծ դնողից,
Կեանքը ունեցող, իրա ձեռքումը
Բայց մահ տուողից,
Իրանց կթանին դառն տանջանքով
Մորթոտողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

39. Մէկը ունողին, ստորին կարգում
Նստեցնողից,
Հազարն ունողին աստիճանաբար
Բարձրացնողից,
Մէկ բոյն քանդողին հողեղէնների
Կարգը դասողից,
Աշխարհ քանդողին հրեղէնների
Դասում պատուողից
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

40. Քահանաների խեղճ այրիների
Դառն վիճակից
Նորանց կենդանի մնացածների հետ
Թաղող օրէնքից,
Լաւն արգելողից ապօրէն ուղին
Հարկադրողից,
Մաքրասէրներին զուր ցեխոտուելու
Առիթ տուողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

41. Զարուեթեան աղբիւր լիրբ և անզգամ
Պիղծ կնիկներից,
Եւ ամուսնութեան սուրբ անկողինը
Պղծող շուն մարդից.
Դորանց կապերը անլուծանելի
Անող օրէնքից,
Դառն գայլի ձեռք, զուր չարչարուելու
Թողնող հովիւից
Հաւատացէք զզուեցայ
Ասուած վկայ զզուեցայ

42. Անպարկեշտ մօրից, լկտի աղջկանից
Անամօթ հարսից,
Վատ հարևանից, շատ ձգողներից
Խարդախ ընկերից։
Գեղեցիկ ծառայ, սիրուն աղախին
Տանը պահողից,
Ընտանեաց վերայ արթուն չընկող
Անհոգ ծնողքից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

Հ.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Масякина
Ա. ՍԱՍՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

43. Առողջ ու սիրուն օրիորդներից
Կին ընտրողներից,
Օժիտի հետ էլ, մեծ գումար դրամ
Պահանջողներից,
Ոսկուց գրաւուող, գերի գրուողից
Փեսայ դարձողից,
Ոսկով փեսաներ գնող ու գանող
Հարսնացուներից.
Հաւատացէք զզուեցայ,
Ասուած վկայ զզուեցայ։

1001/2497

44. Զաղ միս ուտողից, կախէթու գինին
Վերան կոնծողից,
Եղոտ փլաւը, տապակած հաւի միս
Անուշ անողից.
Բեհէղ հագնողից, փափուկ անկողնում
Քաղցր քնողից,
Ադատ ապրողից, անձի կուսութիւն
Հաւատացողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

45. Մեծին՝ ինչպէս մեծ, չընչարգող պատուող
Ցանդուգն փոքրից,
Փոքրին անխնայ սուր սլաքներով
Խոցոտող մեծից,
Քահանաներին ծերունիներին
Չը պատուողներից,
Պատանիների սրտերում որոմ
Ցանող չարերից.
Հաւատացէք զզուեցայ
Ասուած վկայ զզուեցայ։

46. Վատ ծնողներից, վատ յառաջ եկած
Վատ որդիներից,
Սեղանի վերայ կռիւ անողից
Վատ վատ խօսողից,
Օղի կոնծողից, դեղունջ քաշողից
Շուտ շուտ ծխողից,
Բաժակից աւել գինի խմողից
Բաքոսականից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

47. Անգութ տէրերից, գող ծառաներից
Գող տղաներից,
Աւել առնողից, պակաս տուողից
Կշեռք պղծողից,
Որբին զրկողից, տներ քանդողից,
Արիւն թափողից,
Գաղանացողից ծնող ծեծողից,
Անհոգիներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

48. Գործող բանուորի արդար վարձի հետ
Խաղ անողներից,
Քրտնքումն եփուող մշակի վարձը
Կտրող գաղանից,
Բարի ծառայի մթերած վարձը
Ձգձգող տէրից,
Զրկելու համար՝ միտքը ծռողից,
Առիթ փնտրողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

49. Անդուռ բերանից, անհանգիստ սրտից
Բամբասողներից,
Խռովութեան սերմ սիրելեաց միջում
Սերմանողներից,
Եղբայր եղբօրից, որդին իւր հօրից
Բաժանողներից,
Խաղաղ ընտանեաց վառող խորովող
Սև սև օձերից.
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

50. Սուտ խօսողներից, սուտ ասողներից
Սուտ երդուողներից,
Ստութեան պաշտպան սիպտակ մօրուքը
Ձէնք անողներից,
Անհամեստ ծերից, պօռնկացողից
Բան գողացողից,
Ինչ և այն սխտոր, պառաւ հասակում
Սիրահարուողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

51. Յայտնի սիրողից, գաղտնի ատողից
Վնասակարից,
Բարեկամութեան քօղով ծածկուողից
Եղբայր մորթողից,
Օձ ու կարիճից, սուտ բարեկամից
Արիւն ծծողից,
Էլ սէր ու հաւատ աշխարհի միջից
Վերցնողներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

52. Եղբօր բերանից խօսք գողացողից
Խօսքը ծռողից,
Արդար անձերի անուն կոտրողից
Նորանց մատնողից,
Զուր ի զուր տեղը անմեղի գլխին
Փորձանք բերողից,
Դևերից սերուած արեան ծարաւի
Նոր Յուդաներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

53. Հացը ուտողից, երես չանկռողից
Ապերախտ կատուից,
Մարդուս երախտիք ոտքի տակ տուող
Կատաղի վագրից,
Յայտնի սուրբ հրեշտակ, ծածուկ սատանայ
Բէեղզեբուղից,
Նենգ սիրտ եղբօրից, սուտ բարեկամից
Կեղծաւորներից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

54. Փառք իշխանութիւն, ձայն և իրաւունք
Մուրացողներից,
Պղտոր ջրերում լոքոյ ու ճանառ
Որսացողներից,
Ոսկու ջրերով իժերի թոյնը
Քաղցրացնողից,
Ոսկի պսակը գլխին դնելու
Ջանքեր անողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

55. Կեղծ հոգւով դատող, սև կաշառք սիրող
Ագահ անկուշտից,
«Այսօր չէ վաղն՝ արի» ասողից,
Անհոգ դատողից,
Արդար իրաւունք և ճշմարտութիւն
Մեռցնողներից.
Իրանց բռնութիւն օրէնք ու կանոն
Համարողներից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

56. Հին քարթուացած, նեխած ու հոտած
Պաշտօնավարից
Բիւր բիւր հնարքով, վարժուած ու կրթուած
Չար ծառայողից,
«Շուտ հանիր փարէն, որ պրծնիս չարէն»
Ասող ուզողից,
Զառ և զօր չունող, մարդկանց անդանակ
Մորթող քերթողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

57. Անփորձ ու անհալ, դամբիլ՝ այն էլ խակ
Անիմաստ գլխից,
Երկու տող անգամ գրել չիմացող
Թեթևսոլիկից,
Դռնէ դուռն ընկած բիւր-բիւր հնարքով
Պաշտօն մուրողից,
Հացով կաշառքով մեծերի սիրտը
Շրջեցնողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

58. Ուժեղի ձեռքում կուլ եղող խեղճի
Անհոգ զօրեղից,
Ցաւերի գրկում զոհուող աղքատի,
Անգութ բժշկից,
Բաղդի բերմունքից դեռին ընկնողին
Ձեռք չը մեկնողից,
Կարօտեալ եղբարց, պէտքը լցնելու
Հոգս չանողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

59. Կեղծ հոգւով սրտով, կեղծ մտքով լեզուով
Անոյշ խօսողից,
Իրա ընկերի կնոջ ու աղջկանց
Ծուռ-ծուռ նայողից,
Անմեղ հոգիքը մեղքի հորի մէջ
Գլորողներից,
Ամբողջ աշխարհում խայտառակ անող
Դև ընկերներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

60. Ուսման մէջ պղերգ աշակերտներից
Ճառախօսներից,
Իրանցից շատ բարձր եղողների մօտ
Մեծաբանողից,
Կորիւն առիւծին չը հաւանողից
Անզօր ասողից,
Եթերում ճեմող վէս արծիւներին
Ագռաւ կոչողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

61. Գլուխ ցցածից, ձեռները յետև
Դնող շրջողից,
Ուռած ու փքուած քօռ գոմէշ դարձած
Խև ու ցանցառից,
Շատախօսներից, մեծախօսներից
Անապարծներից,
Էլ համ ու հոտը խորքից ու հմքից
Տանող մարդկանցից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

62. Փառահեղ դէմքից, սիպտակ մորուքից
Հսկայ հասակից,
Ակնոց դնողից, ծանր խօսողից
Ծանր քայլողից,
Գիւղացու նման պարզամտութեամբ
Խաբուող մարդկանցից
Արժանին թողած անարժաններին
Պատուող յարգողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

63. Յաջողութեան մէջ, եղբայր եղողից
Կեանքը զոհողից.
Ձախորդութեան մէջ, չը ճանաչողից
Հեռուն փախչողից
Իրար ականջում փսփսացողից,
Իրար խաբողից,
Մէկ «ևի» համար, սուտ ջան ասողից
Սուտ ջան լսողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

64. Սև սև օրերում. պէտք չեղող ոսկու
Գաղած մթերքից,
Նեղ վիճակի մէջ, տանջուող ընկերի
Չօգնող եղբօրից,
Դառնամաղձ կրքոտ ինքնասածներին
Սիրտ տուողներից,
Դևերի ձեռքով գործք կարգի գնող
Մտածողներից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

65. Ուսում չունողից, ուսման մեծ հռչակ
Հեշտ ժառանգողից,
Երկու տող անգամ անսխալ գրել
Չը գիտեցողից,
Անմահ գրողի փառաւոր անուն
Իւրացնողից,
Էշին նժոյգից վերը դասողից
Թանկ կեր տուողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

66. Ցորենների մէջ, որոմ խառնողից
Որոմ ցանողից,
Ժամի պատերից քարեր հանողից
Հիմքը խախտողից,
Մեր մեծ հայրերին փայլուն պապերին
Քարեր ձգողից,
Խառնակ սերմերից, յառաջ եկողից
Ղզօղաններից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

67. «Խաթաբալայի» խաթաբալէքից
Չը վախեցողից,
Իրանց խաթէքի սուր սուր փշերը
Չը մաքրողներից,
Անխիղճ անօրէն խօսքեր ու գործքեր
Կատարողներից,
«Խաթաբալայի» խարոյկի համար
Ճարպ պատրաստողից
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

68. Իրանց շահերը միայն ի նկատ
Ունեցողներից,
Սուրբ ճշմարտութեան կեղծած անունով
Չիլ գոչողներից,
Այլոց գրածի ընտիր մտքերը
Մրոտողներից,
Բիւրբ իւր հնարքով, վարժուած դուրս եկած
Խաչազողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

69. Շատ աշխատողի աղքատ քսակը
Դատարկ թողնողից,
Խաղաղ գրողի անգին գրածի
Օգտից զրկողից,
Զրի առնողից, ձրի տուողից
Զրի սիրողից,
Ազգի մշակի դառն քրտինքը
Զրի լափողից.
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

70. Ծխերի սիրոյն խաչը բարձրացող
Ժիր քահանայից,
Ժամին, դպրոցին կեանքովը օգնող
Երեսփոխանից,
Այսպիսիներից տրտնջողներից
Բամբասողներից,
Վատի սևերով՝ լաւի երեսը
Մրոտողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

71. Ուղիղ խօսողին ուղիղ գրողին
Հալածողներից,
Սուտը ատողից, բայց դարձեալ ստին
Փառքով պատուողից,
Աշխատող ձիուց՝ գարին խլողից
Իշին տուողից,
Ա՛խ. ճշմարտութիւն, խիղճ, հոգի, հաւատ
Զունեցողներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

72. Ոչխարի չաղը, գառի սիրունը
Ընտրող սև գլխից,
Տուր հա տուր ասող, գրպանը սրբող
Փաստաբան մարդից,
Հիւանդի ոսկոռն տէրտէրին թողնող
Ագահ բժշկից,
Յայտնի աւազակ, յայտնի կողոպտող
Վաճառականից
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

73. Շողոքորթներից, սև գարշ սրտերից
Սև հոգիներից.
Զազիր աչքերից, անպատկառներից
Ծաղրածուներից,
Միմոսականից, սիմոնականից
Դովէտականից
Օնանականից, սոդոմականից
Գեհէնականից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

74. Կաղից, չոլաղից, քօռից, քաչալից
Քիթը ծուռ մարդից.
Շլից, բժակնից, թունդ լեզուագարից
Շուտ կրակուողից,
Կակուղ խօսողից, խօսքերի կապը
Շուտ շուտ փոխողից
Գլուխ ծռածից, գետին նայողից
Թունաւորներից
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

75. Ամառուայ շոքից, երկար տօթերից
Երկար անձրևից,
Ձմեռուայ ցրտից, ուժեղ բուքերից,
Ծանգռտ օրերից,
Շուտ մաշուող շորից, շուտ սովող փորից
Շուտ ծարաւողից,
Դատարկ քսակից, մէջքը կոտրողից
Լեզուն կտրողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

76. Անցաւոր կեանքի սուտ հաճոյքներից
Շուտ խաբուողներից,
Սոսկալի տագնապ, ախ, անգութ մահի
Զը յիշողներից,
Անցաւոր փառքին, հոգի ու հաւատ
Կեանք զոհողներից,
Երկնային փառքին, կոպէկն անգամ
Խնայողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

77. Ճշմարտութեանը՝ սև սփոռողներին
Մուր չը քսողից,
Արդարութիւնը՝ մեռցնողներին
Զը հալածողից,
Վատ հոգիներին մօտեցնողից
Երես տուողից,
Աչքի տեղ՝ աչք, ատամի՝ ատամ
Զը հանողներից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

78. Օրիորդների ծնգներից վերև
Բաց շրջողներից,
Մանկամարդերից կուրծք ու մէջքը բաց
Փողոց չափողից
Այլև անվարտիկ, մերկ շրջիլ ուզող
Զափազանցներից,
Սորանց առաջը, շուտով առնելու
Հոգս չանողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

79. Ծակերը մտնող, զեղծմունքներ գործող
Սատանի չարխից,
Մութ մութ տեղերում դրամներ շորթող
Զաթուքեասանից,
Ճաշ և ընթրիքներ, ուտող ու հարբող
Պարող մայմունից,
Յայտնի անմեղին խղճի հակառակ
Վիրաւորողից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

80. Թուրքերից աւել, և թէ Քիւրդերից
Ու Մոնղոլներից,
Հայերի թիւը պակասացնող
Մեր խիստ օրէնքից,
Որ ցարդ զրկում է կուսակրօնին
Այրի հայրերին.
Ազգին օգտաւէտ սուրբ ամուսնութեան
Բեղուն պսակից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

81. Սուտ մարգարէից, սուտ քրիստոսից
Սուտ առաքեալից.
Սուտ քահանայից, սուտ վարդապետից
Սուտ խմբագրից.
Ճշմարիտ ուղին խեղաթիւրողից
Սատանի ձագից։
Խեղճ ժողովրդին մոլորեցնող
Դև Ռօդէններից
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

82. Հպարտ ու անտաշ պատահական մարդ
Տմարդի մարդից,
Մարդկանց շահերի՝ մեծ-մեծ գործքերին
Գլուխ կանգնողից,
Գործքի պատճառով իրա դիմողին
Զգուանք բերողից.
Աղայ դարձողից, բայց մարդ ասում եմ՝
Մարդ չը դարձողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

83. Գիւղականներից գիւղատնտեսին
Զը սիրողներից,
Նորա արհեստը, ձմռան օրերում
Զը սովրողներից,
Մկներին յատուկ գետնափոր տանից
Դուրս չեկողներից
Գերմանացւոց պէս գեղեցիկ կարգով
Տուն չը շինողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

84. Անասունների ցաւերին դարման
Զը գիտցողներից
Բեռնակիրներին՝ անխիղճ ու անգութ
Ծեծող տանջողից,
Անոյժ հողերին պարարտ աղբերով,
Ոյժ չը տուողից,
Նորանցից բիւր կերպ առատ բերքերով
Զը շահուողներից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

85. Հաւատուրացից, անաստուածներից
Խելքի չեկողից,
Այդ իժ օձերի գարշ գլուխները
Զը ջախջախողից,
Հայի հաւատը, Հայի սուրբ ժամը
Զը պաշտողներից
Հայի ճոխ լեզուն, Հայի սուրբ հողը
Զը սիրող հայից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

86. Դասակարգերից իրանց դասերից
Մէկին զրկողից,
Գետին ընկածին, ոտքի կանգնելու
Զեռք չը մեկնողից,
Այրուն՝ու որբին մարդասիրաբար
Զը խնամողից,
Դատարկաշրջիկ անգործ մարդկերանց
Գործք չը գտնողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

87. Բամբասողների բամբասանքներին
Ականջ դնողից,
Բամբասուողներին անձամբ չը փորձող
Հալածողներից,
Լաւ ու պիտանի մարդկանց զուր տեղը
Հեռացնողից,
Վտանգներ բերող, չիք ու վատերին
Գործքի դնողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

88. Յայտնի թոյլերից, շնաբարոյից
Ամօթ չունողից,
Իրա ընտանիք իրա իսկ կամքով
Որսի թողնողից,
Իւրայիններին սանձ չը դնողից,
Անսանձ թողնողից,
Այսպէս իւր տունը Սոդոմ ու Գոմոր
Դարձընող մարդից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

89. Որկրամոլներից, կնամոլներից,
Արուամոլներից,
Օղէմոլներից, գինէմոլներից,
Ծխամոլներից
Ոսկէմոլներից, խաղամոլներից
Ողջ մոլիներից,
Կեանքի մաքրութիւն չափաւորութիւն
Չը սիրողներից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

90. Բարբարոսներից, բռնակալներից
Խստասրտերից,
Վայրենիներից, դոռ գազաններից
Մարդակերներից,
Կոշտ կոպիտներից, հակաճառներից
Վավաշոտներից,
Ոխակալներից, չափազանցներից,
Ծայրայեղներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

91. Ուսումնականից խիղճ չունեցողից
Գաղանացողից,
Գեղին ընկածին անողորմաբար
Տանջող վառողից,
Եղբայրների մէջ՝ բաժան ձգողից
Խռովարարից,
Հեռատեսութիւն չունեցողներից
Վանդ բերողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

92. Կրակ վառողից, հրդեհ ձգողից
Վազեր կտրողից,
Արդար աշխատանք, մէկ կողմ թողնողից
Գող, աւազակից,
Մեծ-մեծ բրդողից, ղրացիներին
Պատիժ դարձողից
Իշխել ուզողից, իշխելու գործքը
Ամբողջ քանդողից
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

93. Փրկիչ Յիսուսի հաւատացողին
Հակառակողից,
Արդար ճանապարհ գնացողներին
Արգելք եղողից,
Ճշմարտախօսին անարգ բառերով
Խոցոտողներից,
Սրբութիւն սիրող, մաքրասէրներին
Ատեցողներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

94. Մատի ցաւիցը բժշկների մօտ
Զը վազողներից,
Նորանց դեղերից բժշկութիւններ
Զը յուսացողից,
Հոգւոյ ցաւիցը սուրբ եկեղեցուն
Զը դիմողներից.
Հոգւով ու մարմնով ցաւագարներից
Զուր կորչողներից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

95. Անկիրթ ծնողից տղոցը առաջ,
Բաց բաց խօսողից,
Նորանց սուրբ մաքուր սրտի հոգւոյ մէջ
Պիղծ սերմ ցանողից,
Անխոհեմութեամբ նորանց լսելիք
Ապականողից
Այսպէս իրանց տուն դևերի կայան
Դարձընողներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

96. Սիրահարութեամբ կին առնողներից
Կին թողնողներից
Անամօթաբար սուրբ պսակի հետ
Խաղ անողներից,
Աստուծոյ վախը, մարդկանց ամօթը
Զունեցողներից,
Անհաւատներից, անկրօններից
Փչացածներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

97. Տղայ թէ աղջիկ, առանց ծնողի
Կամքը առնողից,
Իւր ազատ կամքով սրտի ուզածին
Կին տուն բերողից,
Խաթաբալէքը իրա իսկ ձեռքով
Գլխին բերողից,
Յանդուգն որդուց, անսանձ աղջկանից
Թուք ու մուրերից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

98. Տէրտէրների պէս առքի չափ, սահման,
Զունեցողներից,
Մարմին անհոգի գրավաճառից
Մոմավաճառից
Ճիշտ գրպանահատ գինէվաճառից,
Մանրավաճառից
Ստութեան սարուկ մրգավաճառից
Մսավաճառից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

99. Առանց գործքերի մեծ-մեծ պարգևներ
Ձեռք բերողներից,
Առանց զէնքերի առիւծների դէմ
Դուրս եկողներից,
Քսակը դատարկ, առաջ ընկնողից
Խէնթ-խէնթ խօսողից,
Գլուխը դատարկ, շքեղ պալատի
Պլան գծողից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

100. Խեղճ տղաներից երգեցողութեան
Խմբեր կազմողից,
Մեռածի վերայ երգելու համար
Նորանց տանողից,
Ձնչին դրամով նորանց աչքերը
Կուրացողնից,
Այսպէս միջոցաւ նորանց ապագան
Փչացնողից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

101. Իրա աչքերի խիստ մեծ գերանը
Մէկ կողմ թողնողից,
Ուրիշի աչքի շատ փոքր շիղը
Գերան դոչողից,
Իրա վատ վարքի մեծ գոմէշները
Փոքրացնողից
Ուրիշի կեանքի փոքր լուերը
Մեծացնողից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

102. Իր շուրջը խոհեմ, իմաստուն մարդիկ
Ունեցողներից,
Խորամանկների չար խորհուրդներով
Գործ կատարողից,
Ձարերի կամքով, չարերի խօսքով
Առաջնորդուողից
Ձարերի բասրանք, լուերի ձեռքով
Ը քննողներից,
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

103. Գաղտնի ցաւերով վարակուողներից
Լուսնոտ ու խելից,
Խաբէբայութեամբ առաջ ընկնողից
Ամուսնացողից,
Խաբուող առողջին գուր տանջուելու
Ձոհ դարձընողից
Պտակի լուծման դիմելու առիթ
Եղող շներից,
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

104. Միլիոնների մեծ հարստութիւն
Ունեցող մարդից,
Քահանաների կարօտ վիճակին
Հոգս չանողներից,
Ճոխին շահողից, հեգին զրկողից
Անօգուտ ծովից,
Անպէտք անձրևից, անբեր դաշտերից
Անստոյգ գովքից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

105. Անփորձ բալէքից, դեռ աւազանը
Ը մանողներից,
Իրանց ձեռքերը բիրտ գաւազանը
Շուտ առնողներից,
Խիստ խիստ պատուէրներ արձակողներից
Խստասրտերից,
Խստութիւնների հետևանքները
Յուշ չառնողներից,
Հաւատացէք զզուեցայ,
Աստուած վկայ զզուեցայ։

106. Գրասէրներից, ջանքեր անողից
Գիրք կազմողներից,
Դիոգինէսի լուսով Մեկենաս
Որոնողներից,
Գրքերի գինը անիրաւացի
Կրճատողներից,
Յետին մաքերով ձգձգողներից.
Կուլ տուողներից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

107. Վարդապետներից վարդի անոյշ հոտ
Չը բուրողներից,
Քահանաներից ծխերի ցաւը
Չը հոգացողից
Ուսանողներից պորտերից ցածրը
Մտածողներից,
Սազանդարներից օտարի լեզուով
Խաղեր երգողից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

108. Յանցանք գործողին գործածիցը շատ մեծ
Պատիժ տուողից,
Ցաւը լսողից ցաւին մի դարման
Չը հասցնողից,
Պէտքական մարդու հացը կտրողից
Հացից զրկողից,
Անպէտքականին հազար ծակերից
Հացով լցնողից.
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

109. Գիտնականների սխալ կողմերը
Ճիշտ չը քննողից,
Նորանց գրածի բոլոր կէտերից
Յափշտակուողից,
Սխալուողներին որպէս անսխալ
Ընդունողներից,
Հողեղէն մարդուն Աստուծոյ պատիւ
Տուող մարդկանցից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

110. Գովք վաճառողից, գովքեր գնողից
Անգոյն մարդկանցից,
Իրանց չիք գործքին թմբկահարողներ
Վարձող վատերից,
Աղբի տոպրակին, հանճարի ամբար
Հռչակողներից,
Մարդկանցը այսպէս մոլորեցնող
Խաբեբաներից
Հաւատացէք զզուեցայ
Հոգիս վկայ զզուեցայ։

111. Փառքի ձգտողից, փառքի վանդներ
Չը յիշող մարդից
Մեծութեան համար մեծ-մեծ ցաւերը
Յանձին առնողից,
Իւր արժանիքին իրան հակառակ
Սև գիծ քաշողից
Զար ժամանակիս անվերջ չարիքին
Կամաւ զոհուողից.
Հաւատացէք զզուեցայ
Աստուած վկայ զզուեցայ։

112. Աստուած ու Հոգին ժամ ու սրբութիւն
Հաւատացողին,
Յիսուսի սէրը իրա սրտումը
Հաստատ ունողին,
Իրա անձի պէս, բարիք մարդկերանց
Ցանկացող անձին,
Անզօր ընկերի խաչը իւր ուսին
Բարձող ընկերին.
Հաւատացէք սիրեցի
Աստուած վկայ սիրեցի
Հոգիս վկայ սիրեցի։

Ազգային գրադարան
NL0348970

41827

ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ՔԱՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ

Աշխատասիրութիւնները

—o—

1. Խորհրդածութիւն դոկտոր Նելսըն Ամերիկացւոյ. էջ 292 և յաւելուածներ էջ 48 (սպառ.) 2 ռ. կ.
2. Ս. Գրոց հին ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհարարը լուսաբանութեամբ և աշխարհի անցքերով. էջ 915 2 » 50
3. Ոսկի բարեկամ հայ ընտանեաց, երբսրդ տպ. 70 պատկերներով, էջ 905 . . 5 » —
4. Կանոնագրութիւն Տփխիսի հայ քահանաների միաբանու. էջ 31 (քննադատելի) — 10
5. Դրախտի Մարգարիտներ, էջ 72. 1 պատկերով . . . . . — 25
6. Դիւան Տփխիսի Հայոց եկեղեցիների էջ 80 — 55
7. Զրուանքներ էջ 40 . . . — 20

ԳԻՆՆ Է 20 ԿՊ.

Հասցէն՝ Тифлисъ, Протоіерею Григорій Мандакуни.